ՀՏԴ 929:75(479.25) Մանուկյան

Doi:10.54503/0135-0536-2024.2-231

Արթուր Մանուկյան. Պլակատ, գրաֆիկա [երկլեզու (հայերեն և անգլերեն) պատկերագիրք], *Երևան, «Զանգակ–97» հրատ., 2023, 152 էջ*:*

Բանալի բառեր՝ պլակատ, գրաֆիկա, ինտերիերի դիզայն, հարթաքանդակ, դիմանկարներ, խորհրդապատկերներ:

Գրիգոր Մովսիսյան և Նաիրա Կարապետյան ամուսինների հովանավորությամբ 2023 թ. լույս տեսավ «Արթուր Մանուկյան. պլակատ, գրաֆիկա» երկլեզու պատկերագիրքը, որում զետեղված հարյուր տասնութ անուն գունավոր վերատպությունները բացահայտում են Գեղարվեստի պետական ակադեմիայի սանի՝ շնորհաշատ նկարիչ Ա. Մանուկյանի գրաֆիկական ստեղծագործությունը: Ալբոմում համակարգչային գրաֆիկայի լեզվով, քաղաքական և սոցիալական սուր ուղղվածությամբ պատկերավոր և լակոնիկ պլակատները մեկտեղված են ներհուն-կամերային հնչերանգով ջրանկարների ու մատիտանկարների հետ: Ա. Մանուկյանը նաև հաստոցային հարթաքանդակների հեղինակ է, ինտերիերի և ոսկերչական իրերի դիզայներ: Այս աշխատանքները, սակայն, պատկերագրքում ներկայացված չեն:

Ա. Մանուկյանի «Հայրենիք. արտագաղթ» պլակատն արվ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանն ընդգրկել է իր «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» հիմնարար աշխատության մեջ (2009 թ.): Այսինքն, այն արդեն իր արժանի տեղն է գրավել հայ արվեստի պատմության մեջ: Ա. Աղասյանը 2023 թ. նոյեմբերի 14-ին Մ. Սարյանի տունթանգարանում տեղի ունեցած սույն պատկերագրքի շնորհանդեսի ժամանակ Ա. Մանուկյանին բնութագրեց որպես «շնորհալի արվեստագետ», ում վերոհիշյալ պլակատը նա շատերի միջից էր ընտրել, քանի որ «այն միանգամայն համապատասխանում էր պլակատին ներկայացվող պահանջներին»: «Ամենասուղ միջոցներով… նա կարողացել է արտահայտել այն գաղափարը, թե ինչ վնաս է հասցնում արտագաղթը մեր Հայրենիքին: Սուղ լեզվով, բայց շատ դիպուկ», – եզրակացրեց արվեստաբանը:

Ա. Մանուկյանը ՀՀ նկարիչների միության անդամ է, ՀՀ դիզայներների, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, միության և դիզայներների միջազգային ասոցիացիայի անդամ: Նրա ստեղծագործությունների անհատական և խմբային՝ հանրապետական և միջազգային պատկերահանդեսներին և մրցույթներին ընթերցողը կարող է մանրամասն ծանոթանալ սույն պատկերա-

* *Ներկայացվել է 03. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

գրքի «Ցուցահանդեսներ» բաժնից (էջ 129–135):

Պատկերագրքի «Մատենագիտություն» բաժնից տեղեկանում ենք Ա. Մանուկյանի արվեստին նվիրված հայալեզու և ռուսալեզու շուրջ երկու տասնյակ հոդվածների մասին՝ «Ռոսլին» արվեստի հանդեսում, «Ազգ», «Ուղեկից», «Հայաստանի Հանրապետություն», «Հրապարակ», «Իրատես», «Շառավիղ», «Հայաստանի ազատամարտիկ», «Голос Армении» *և այլ թերթերում:*

Սույն պատկերագիրքը Մանուկյանի արվեստի ուսումնասիրության ուղղությամբ կարևոր քայլ է: Արվեստագետին ներկայացնում են Գեղարվեստի ակադեմիայի նրա ուսուցիչ, արվ. վաստակավոր գործիչ, պրոֆ. Կարեն Աղամյանը, արվ. թեկնածուներ Արթուր Ավագյանը և Անուշ Ասլիբեկյանը, արվեստաբան Տաթևիկ Համբարձումյանը, բ. գ. թ. Ռուզան Սարյանը և երաժիշտ Վահան Արծրունին:

Նախաբանի համառոտ խոսքում Կ. Աղամյանը ստեղծագործական գործընկեր Ա. Մանուկյանին բնորոշում է որպես մի արվեստագետի, որն «անգերազանցելի է հատկապես պլակատի ասպարեզում»: Նա կարևորում է նկարչի պլակատների կատարման բարձր պրոֆեսիոնալիզմը, դրանցում առկա համամարդկային և ազգային թեմաների արդիականությունը, ցավում, որ այդ պաստառները չեն հրապարակվում, և «նրանց ազդեցիկ ուժը, գաղափարական ազդակները չեն հասնում մեր հասարակությանը» (էջ 7): Կ. Աղամյանի համոզմամբ՝ արվեստագետն իր ուրույն ասելիքն ու առանձնահատուկ լեզուն ունի նաև կերպարվեստի մյուս բնագավառներում:

«Արթուր Մանուկյանի բազմահնչուն պոետիկան» ակնարկում Ա. Ավագյանը ներկայացնում է նկարչի կենսագրությունը, անդրադառնում նրա պաստառներին, գծանկարներին, հարթաքանդակներին և դիզայներական աշխատանքներին: Արվեստաբանը բարձր է գնահատում Ա. Մանուկյանի պլակատային ստեղծագործությունը՝ «հեղինակի սուր միտքը», «ասելիքը հստակ ու լակոնիկ բանաձևելու կարողությունը», «նկարչական դիպուկ ու արտահայտիչ լեզուն» (էջ 11): «Հասարակությանը հուզող խնդիրների, իրադարձությունների հրատապ, կենդանի արձագանքները», ըստ արվեստաբանի, նրա գրագիտության ու ճաշակի վկան են՝ կոչված «արթնացնել միտքը, սթափեցնել, մղել ակտիվ քայլերի» (էջ 12): Արվեստաբանի ուշադրությունը սևեռվում է «Կանաչ բնություն՝ առողջ պետություն» (2017), «Առաջին Հանրապետություն–100» (2018), «Ոչ հարբեցողությանը» (2020), «Մեկ ազգ, մեկ բռունցք» (2020) և այլ պլակատների այլաբանական մատուցման վրա:

Ա. Մանուկյանի հարթաքանդակներում Ա. Ավագյանը տեսնում է փայտի, մետաղի և գործվածքի հմուտ կիրառմամբ դիցաբանական, արխետիպային սիմվոլների միջոցով կիսաձայնող հավիտենական թեմաների արարում: Արվեստաբանն այս աշխատանքներում թեմատիկ և ոճական աղերսներ է գտնում Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների հետ, շեշտում դրանց «դեկորատիվ լիցքը» և «ծիսական իմաստավորությունը» (էջ 13):

Ա. Ավագյանն անարձագանք չի թողնում նաև Ա. Մանուկյանի՝ ջրաներկով ու գունավոր մատիտներով կատարված փոքրադիր աշխատանքները, դրանցում տիրող «խորհրդավոր լռությունը» և «գաղտնիքի մթնոլորտը» (էջ 13): Հատկապես, նրան գրավում են արվեստագետի ինքնադիմանկարը և նրա տատիկի դիմապատկերը (երկուսն էլ՝ 2005), որոնցում նա զուգահեռներ է տես-

նում Վերածննդյան գեղագիտության հետ:

Ա. Ավագյանը հիշատակում է Ա. Մանուկյանի աշխատանքը՝ հեռուստահաղորդումների տաղավարների և թանգարանների ինտերիերների դիզայնի բնագավառում, կարևորում է ոչ միայն դրա ֆունկցիոնալ, այլև՝ էսթետիկական նշանակությունը:

«Արթուր Մանուկյանի արվեստը որպես ժամանակի և գաղափարի համադրության եզակի հյուսվածք» ակնարկում Ա. Ասլիբեկյանը նույնպես անդրադառնում է արվեստագետի հարթաքանդակներին՝ ընդգծելով դրանց «ինքնատիպ գաղափարական խորագրերը», «մտքի ու կատարման ներդաշնակությունը և ոգեղենությունը», արքետիպային բնույթն ու ժամանակակից հնչողությունը (էջ 19):

Նա ներկայացնում է Ա. Մանուկյանի նախագծած հեռուստատաղավարները՝ «Հայ ասպետ» (Կ. Աղամյանի համահեղինակությամբ), «Ժողովրդական երգիչ», «Էկոհարթակ», «Մերոնք», «Սյուներ» և այլ հաղորդաշարերի համար, արձանագրում է Մ. Սարյանի տուն-թանգարանի համար արվեստագետի հեղինակած նոր էքսպոզիցիայի հաջողությունը: Ա. Ասլիբեկյանն ուրվագծում է 2020 թ. դեկտեմբերի 22-ին այս թանգարանում կայացած «Արվեստագետը երկու արհավիրքների առանցքում» հինգերորդ անհատական ցուցահանդեսի երկու թեմաները՝ քովիդը և պատերազմը՝ իրենց ենթաթեմաներով, որոնց ծիրում «պայքարող» և «հաղթող» մարդն է (էջ 20): Ա. Ասլիբեկյանը կարևորում է, որ 2021 թ. Հ. Իգիթյանի անվան կենտրոնում կայացած Գեղարվեստական տպագրության երրորդ միջազգային բիենալեի 353 ստեղծագործությունների կողքին «իր պատվավոր տեղն էր զբաղեցնում Արթուր Մանուկյանի «Հաղթանակ» կոչվող պլակատը» (էջ 20): Ա. Մանուկյանի բոլոր գործերում նա գնահատում է «բարձր պրոֆեսիոնալիզմը», «բարձր գեղարվեստականությունը» ու «գաղափարական ընդգծված ենթատեքստը» (էջ 20):

«Ժամանակի զարկերակին» ակնարկում Տաթևիկ Համբարձումյանը փորձում է Ա. Մանուկյանի արվեստը դիտել ժամանակի պրիզմայի ներքո: Դիտարկելով արվեստագետի պլակատային արվեստը՝ նա արդարացիորեն գտնում է, որ հեղինակը «մշտապես որսացել է ժամանակի զարկերակը և հաղորդակցվել է հասարակության հետ» (էջ 24): Տ. Համբարձումյանը Ա. Մանուկյանի հաջողության գրավականն է համարում դիզայնին, ժամանակակից տեխնոլոգիաներին և գեղանկարչության դասական հնարքներին տիրապետումը: «Նուրբ գունային ներկապնակի» և «կոնստրուկտիվիստական մոտեցումների» համադրությամբ ստեղծված գծանկարների ինքնատիպությունը Տ. Համբարձումյանը համարում է նրա հասունության վկայություն:

Ռ. Սարյանն Ա. Մանուկյանի պլակատների արժանիքներից է համարում դրանց «մետաֆորիզմը, հակիրճ միջոցներով արդիական իրավիճակը ներկայացնելու» և դիտողին հաշվի առնելու հանգամանքը (էջ 57): Ա. Մանուկյանի պաստառների արդիականությունը շեշտում է նաև Վ. Արծրունին՝ ընութագրելով նրան որպես «ժամանակը բացառիկ զգացող արվեստագետ» (էջ 56):

Այսպիսով, Արթուր Մանուկյանը վերածնում է պլակատի խոսուն և արդիական ժանրը մեզանում, և դա անում է շնորհաշատ կերպով: Հասարակական-քաղաքական կոնկրետ գործառույթ կրող կերպարվեստի առավել մասսայական և տեսլական այս տեսակի՝ ուշագրավ, 1998–2023 թթ. հայ ազգի կյան-

քի հետ սերտ շաղկապված այս ստեղծագործությունները հանրայնացնելու փայլուն հնարավորություն է ընթերցողի սեղանին դրված սույն պատկերագիրքը: Այն ծանոթացնում է նաև արվեստագետի ստեղծագործության մյուս՝ քնարական ու փիլիսոփայական կողմին: Պատկերագրքի արժանիքներից է նաև Ա. Մանուկյանի գրաֆիկան ներկայացնող հեղինակների հետաքրքրական և համոզիչ խոսքը:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Արվ. թ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ XX դարի հայ կերպարվեստ: Հեղինակ է շուրջ 35 հոդվածի: ORCID:0009-0009-0880-5317. margaritakamalyan@gmail.com